



ԲԺՇԿԱԳԵՏ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ ՄԿԸՏԶԵԼՆ ՏԵՐ ԳՐԻ-  
ԳՈՐԵԼՆ — Հանրամատչելի  
բժշկարան, հատոր առաջին,  
գիրք Գ. Վեներական աս-  
տեր. Թիֆլ. տպ. Մ. Մարտ.  
1896. 8<sup>0</sup>. Եր. 192 գրին է  
90 կողէկ, ծանապարհա-  
ծախքով 1 ուրլի:

Բժշկապետ պ Տեր Գրիգորեան (Թիֆլիզեցի)  
ահա մի քանի տարի է ձեռնարկել է մի շատ օգ-  
տակար գործի « հանրամատչելի բժշկարանի » հրա-  
տարակութեան սակայն դժբախտաբար այդ գործն  
ինչպէս երևում է յաջողութիւն չէ ունեցել և  
յարգելի հեղինակն ստիպուել է այս երրորդ գըր-  
քով դադարեցնել իւր հրատարակութիւնն, որովհե-  
տև նիւթական խրախոյս չէ գտել, Անկեղծօրէն  
յայտնում ենք մեր ցաւն այդ մասին և յոյս ենք  
տածում, որ պ. բժշկապետն իւր եռանդի շնորհիւ  
վաղ թէ ուշ կը լրացնի իւր սկսած գործը, Այս  
հատորն առանձնապէս օգտակար կարող է լինել մեր  
գաւառական և մանաւանդ գիւղական հասարակու-  
թեան, որի պանդխտութեան դիմող անդամներն  
շատ յաճախ աստերով վարակուած են տուն դառ-  
նում, և պատճառ լինում ամբողջ ընտանիքների,  
մինչև իսկ գիւղերի վարակման, Մեր ժողովուրդը  
գեռ նախապաշարումների շրջանումն է և գիւղա-  
կան հեռաքիմներին շատ զոհեր ենք տալիս,  
ուստի շատ ցանկալի է ուղիղ բժշկական ծանօթու-  
թիւնների տարածումն, ուստի և այս տետրը յանձ-  
նարարում ենք մանաւանդ մեր գիւղական քահա-  
նաներին, որոնց պարտքն է հոգեկան առողջութեան  
հետ միասին փոյթ տանել և մարմնականի վրայ,  
Ցանկալի էր սակայն որ գրքիս լեզուն ևս հանրա-  
մատչելի լինէր, ինչպէս բովանդակութիւնն աշխա-  
տած է հանրամատչելի կացուցանել:



ԳՆՍՏԻՆԸ ԿՈՒԹԵԼՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ — Գերմա-  
ներէնից թարգմանեց Ս. Ման-  
գինեանց. արտատպած Լ ու  
մ ա յ հանդիսից. հրատա-  
րակութիւն Պատրիկի. Թիֆ-  
լիզ տպ. Մ. Շարաձէի. գրին  
է 30 կողպ.

Օրինակի ազդեցութիւնն ամենից կրթիչն է  
մանկավարժութեան մէջ. ահա մի այդպիսի կենդա-  
նի օրինակի նկարագիրն է, որ տուել է մեզ գեր-

մանացի մանկավարժներից մէկն և որ կարևոր է  
համարել հայերէն թարգմանել մեր հայկական ման-  
կավարժութեան հայր պ. Ս. Մանգինեանը, Պ.  
Ս. Մանգինեանի այս թարգմանութիւնը չունի  
ոճի այն ծանրութիւնը, որ յատուկ է նրա այլ  
գրուածքներին, ուստի շատ դիւրութեամբ կար-  
դացուում է, Յանձնարարում ենք մեր ընթեր-  
ցող բոլոր ծնողներին և դաստիարակներին,

Ե. Զ.



ՄԻՍԻՈՆԵՐ ԼԸՅՐ ԴԵՄԵԼՆ ՎԵՅՍԵՒՐԻ ԿԵԼՆ-  
ԲԸ. Տիֆլիս. 1896.

Արարտն առանձին սիրով ողջունում է այս-  
պիսի թարգմանութիւնների հանդէս գալը մեր  
գրականութեան մէջ, որ այնքան աղքատ է մանա-  
ւանդ քրիստոնէական—բարոյական կրթութեան նը-  
պաստող գրուածքներով, ներկայ գրքոյկի հերոսը՝  
Հայր Դամեան, մի Բելգիացի կաթոլիկ միսիոնար  
է, որ իւր կեանքը նուիրել է մարդկութեան ամե-  
նաթշուառ ներկայացուցիչներին՝ Սանդիչեան կըղ-  
զիներից մէկի վերայ բնակուող բորտաների մէջ 16  
տարի շարունակ իբրև միսիոնարիչ հրեշտակ գոր-  
ծելով և քրիստոնէական սիրոյ և առաքինութեան  
կատարելագոյն օրինակ ընծայելով, նորա ոչ մեծա-  
մեծ արկածներով այլ ներքին բովանդակութեամբ  
հարուստ կեանքի զլիւսւոր գծերը ճարտար և ազ-  
գու կերպով գծուած են այստեղ և կարող են ամեն  
դասակարգի մարդոց համար հետաքրքրի և կրթիչ  
ընթերցանութեան նիւթ լինել, Անգղիերէնի ուու-  
սերէն թարգմանութիւնից բաւական աջողակ փո-  
խադրել է այս գրքոյկը Գէորգ քահ. Մկրտում-  
եանը, ինչպէս իւր յառաջարանի մէջ ազում է՝  
մի աշակերտուհու գործակցութեամբ, Ցանկալի էր,  
որ ուրիշ քահանաներ ու ուսուցիչներ ևս այսպիսի  
գրուածքներով դաստիարակէին իրենց սաներին և  
օգտակար լինէին հասարակութեան:



ՆՈՐ ՍՍԸՅՈՒԸԾ.

Մեկքիսեդեկի Եպիսկոպոսի Զմիւռնիոյ՝ Նա-  
մականի առ Տ. Կարապետ երէց Սեթեան. Կալաց  
1896.

